# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«14» Հոկտեմբերի 2025 թ. N 200-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 15-րդ կետը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի կողմից 2025 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված՝ քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 20 կրեդիտ:
2. Հաստատել «Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-11-14 10:18:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Հավելված**
**ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի**
**2025 թվականի** հոկտեմբերի 14 **-ի N** 200 **-Ա հրամանի**

**«Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» միջոցառման ժամանակացույց**

| Հ/Հ | Ամսաթիվ | Ժամ | Թեմայի անվանում | Դասախոսի անուն և ազգանուն | Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը | Միջոցառման կրեդիտները | Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը | Մասնակցության վճարի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |
| 1 | Նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 9-ը (Երեքշաբթի և ուրբաթ օրերին) | 12.00-17.00 | «Գեոտեխնիկա (Գրունտագիտություն)» ***վերապատրաստման դասընթաց*** | Սարգիս Հրաչիկի Հայրոյան ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի երկրաֆիզիկայի, ճարտարագիտական երկրաբանության և ջրաերկրաբ | ԵՊՀ, Ալեք Մանուկյան 1, 1-ին ուսումնական մասնաշենք | 20 կրեդիտ | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի, 3-րդ կարգի մասնագետ 4, 5,6, 15, 16, 17, 18, 23, 24, 25 և 26 մասնագիտություններ | 80.000 ՀՀ դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | անության ամբիոնի պրոֆեսոր, երկրաբանական գիտությունների դոկտոր | | | | |